ԻՆՉՈՒ՞ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՂՈԹԵԼ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՂՈՒԿԱՍ 22:39-46, ԴԱՆԻԵԼ 6

Ղուկաս 22:39-46 – 39 Հիսուսը ելավ, իր սովորության համաձայն Ձիթենյաց լեռը գնաց. աշակերտները հետևեցին նրան: 40 Երբ այնտեղ հասավ, նրանց ասաց. Աղոթե՛ք, որ փորձության մեջ չընկնեք: 41 Ինքը նրանցից մի քարընկեցի չափ հեռացավ և ծունկի իջած աղոթում էր 42 և ասում. Հայր, եթե կամենում ես, այս բաժակը հեռացրո՛ւ ինձանից. սակայն ոչ թե իմ, այլ քո կամքը թող լինի: 43 Եվ նրան երկնքից հրեշտակ երևաց ու զորացնում էր նրան, 44 և նա, սաստիկ տագնապի մեջ լինելով, ավելի եռանդուն էր աղոթում: Նրա քրտինքը դարձավ արյան կաթիլների պես, և թափվեցին գետնին: 45 Աղոթքից վեր կենալով՝ եկավ իր աշակերտների մոտ և տրտմությունից քնած գտավ նրանց: 46 Եվ նրանց ասաց. Ինչո՞ւ եք քնում. վե՛ր կացեք, աղոթե՛ք, որ փորձության մեջ չընկնեք:

- ***Մենք բոլորս ունենք օրական 24 ժամ և այդ ժամերից յուրաքանչյուրի սպասարկուն ենք: Երբևէ հետևե՞լ եք, թե ինչ եք անում ձեր կյանքի ժամերի հետ:***

...աղոթե՛ք, որ փորձության մեջ չընկնեք:

1. ԱՂՈԹՔԸ ՄԵԶ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ԳԱԼԻՔ ՓՈՐՁՈՒԹՅԱՆԸ:

*Դանիել 6:7 – Ո՛վ Դարեհ թագավոր... մի հրաման արձակի, և արգելանք պարտադրվի, որ ոչ ոք, քեզնից բացի, ո՛վ թագավոր, **երեսուն օր** ոչինչ չխնդրի որևէ աստծուց կամ մարդուց, այլապես նա առյուծների գուբը գցվի:*

Դանիել 6:9 – Ուստի Դարեհ թագավորը ստորագրեց հրովարտակը և արգելանքը:

Դանիել 6:10-11 – 10 Երբ Դանիելն իմացավ, որ հրովարտակը ստորագրվել էր, գնաց իր տունը. նրա վերնատան պատուհանները բաց էին դեպի Երուսաղեմ: Նա օրը երեք անգամ ծնրադրում էր, աղոթում և գոհաբանություն էր հայտնում իր Աստծուն, ինչպես նախապես անում էր: 11 Ապա այդ մարդիկ խմբվեցին և Դանիելին գտան, երբ նա իր Աստծու առաջ խնդրում և աղաչում էր:

- ***Դանիելայի և Հիսուսի միջև զուգահեռներ.***
  - *Եվ Դանիելը, և՛ Հիսուսը դարձան դավադրության զոհ:*
  - *Երկու պատմություններում էլ կարող ենք սուտ վկաներ տեսնել:*
  - *Երկուսն էլ լցված են Հոգով (որովհետև նրա մեջ գերազանց Հոգի կար, Դանիել 6:3):*
  - *Երկուսն էլ երեք անգամ աղոթել են մինչև ձերբակալվելը:*
  - *Երկու դեպքում էլ թագավորը ձգտում է ազատ արձակել մեղադրյալին, սակայն չի հաջողվում:*
  - *Երկուսն էլ մահապատժի են դատապարտվել:*
  - *Գերեզմանը փակված է քարով և կնքված:*
  - *Եվ Դանիելը, և՛ Հիսուսը կրկին հայտնվում են մեռելներից առավոտյան:*

Դանիել 6:20-22 – 20 Թագավորը խոսեց և ասաց Դանիելին. Ո՛վ Դանիել, կենդանի Աստծու ծառա՛, քո Աստվածը, որին անդադար պաշտում ես դու, կարողացա՞վ քեզ ազատել առյուծներից: 21 Այն ժամանակ Դանիելը խոսեց թագավորի հետ. Ո՛վ թագավոր, հավիտյա՛ն ապրիր: 22 Իմ Աստվածն ուղարկեց իր հրեշտակին, և նա փակեց առյուծների բերանը, ու նրանք ինձ չվնասեցին, որովհետև նրա առաջ ես անմեղ գտնվեցի: Քո առաջ ևս, ո՛վ թագավոր, ոչ մի հանցանք չեմ գործել:

Մատթեոս 28:1-2 – Շաբաթ երեկոյան՝ կիրակի լուսադեմին, Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: Եվ ահա մեծ ցնցում եղավ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից իջավ, գնաց, մուտքի քարը մի կողմ գլորեց ու նրա վրա նստեց:

- *Դանիելի թշնամիների բոլոր ոսկորները կտոր-կտոր են լինում, մի ձակատագիր, որը կպատահեր Դանիելի հետ, եթե Աստված չմիջամտի: Այսպիսով, Դանիելի ոսկորները, ինչպես Զատիկի գառը, խնայվեցին: (Դանիել 6:24):*

  Հիսուսին խաչում և թաղում են գերեզմանում, բայց նրա ոսկորները չեն կոտրվում: Նա կատարյալ Զատիկի Գառն է: (Հովհաննես 19:36)

- *Երբ Դանիելին բարձրանում են փոսից, նրա թշնամիներին նետում են նույն տեղը և առյուծների կողմից խժռում: (Դանիել 6:24)*

  Իր մահվան և հարության միջոցով Հիսուսը զինաթափել և խայտառակ է արել իր թշնամիներին: (Կողոսացիս 2.13–15)

ԵՎ ԱՅՍՊԵՍ, ԻՆՉՈՒ՞ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՂՈԹԵԼ...

2. ԱՂՈԹՔԸ ՄԵԶ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՓՈՐՁՈՒԹՅԱՆ <u>ՄԻՋՈՎ</u> ԱՆՑՆԵԼՈՒ:

- ***Խոստումը.***

  Սաղմոս 23:4 – Թէ եւ <u>քայլեմ շուքի ձորումը</u>՝, չար բանից չեմ վախենա, որովհետև դու ինձ հետ ես, քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ:

  Ես. 43:2 - Երբ ջրերի <u>միջով անցնես</u>, ես քեզ հետ կլինեմ, <u>երբ անցնես</u> գետերով, դրանք քեզ չեն ողողի, երբ <u>քայլես կրակի միջով</u>, չես այրվի, և բոցը քեզ չի լափի:

- ***Հիսուսի աղոթքը մեզ համար.***

  Հով. 17:15 – Ես չեմ խնդրում, որ նրանց աշխարհից վերցնես, այլ որ նրանց պահես չարից:

- ***Հիսուսի նախազգուշացումը եկեղեցուն.***

  *Մարկոս 13:33-37 – 33 Զգո՛ւյշ եղեք, **<u>արթո՛ւն մնացեք ու աղոթե՛ք</u>**, որովհետև չգիտեք, թե ժամանակը ե՞րբ է գալու: 34 Ինչպես այն մարդը, որ հեռու աշխարհ գնալիս իր տունը կթողնի, իր ծառաներին իշխանություն կտա, յուրաքանչյուրի համար իր գործը կսահմանի, իսկ դռնապանին կհրամայի, որ **<u>արթուն մնա</u>**:*

*35 **Արդ, արթո՛ւն կացեք**, քանի որ չգիտեք, թե տանտերը երբ կգա՝ երեկոյա՞ն, թե՞ կեսգիշերին, աքլորականչի՞ն, թե՞ առավոտյան: 36 Չլինի թե հանկարծակի գա և **ձեզ քնած գտնի**: 37 Եվ ինչ որ ձեզ ասում եմ, բոլորին եմ ասում՝ **արթո՛ւն կացեք**:*

Ղուկաս 22:46 – Եվ նրանց ասաց. Ինչո՞ւ եք քնում. վեր կացեք, աղոթեք, որ փորձության մեջ չընկնեք:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ